

Կ ա ն չ Փ ա ռ ո ւ խ ի ց

Ես շեմ ծնվել Արցախի գեղատեսիլ լեռնաշխարհում, շեմ վազվել Գրա ծաղկափթիթ հանդերում, շեմ շնչել նրա եղեմական ողը, բայց այսօր հոգու հազար ու մի թելերով կապված եմ նրա հետ և դարձել եմ նրա ազատության համար մարտնչողներից մեկը:

Ավելի լավ է, ամեն ինչ՝ սկզբից:

Մնողներս լենինականցի են: Ինարկե, այսօր իմ հայրենի քաղաքը ավելի մեծ կարիք ունի շինարար ձեռքի, սակայն... Սակայն, ես մերն է, իսկ Արցախը՝ դեռ կովախնձոր: Եվ հենց դա ել նկատի առնելով, շինարար հայրս մեկնեց Արցախ, վերակառուցելու Ասկերանի շրջանի մեռնող Փառուխ գյուղը: Մայրս հորս մենակ շրողեց, ես ել՝ իրենց: Արդեն երկու տարի է, կառուցում, շենացնում ենք Փառուխը, բայց... Բայց «ինտերնացիոնալ» կոչեցյալ մեր հարևանների նոր զգեստավորումը շրջուխեց նրանց էռույունը՝ ավերել, գողաճալ, սպանել: Եվ մի օր ել որսորդական հրացանով, գաղտագողի փորձեցին սպանել հորս, հենց տանիքի վրա: Բախտի բերմամբ վերը մահացու չեր:

Հայրս՝ Ժորա Խաչատրյանը, երդեց նըրանց դեմ պայքարել դեռ շինարարի մուրանք: Իսկ ինչ տեղի ունեցավ վերջերս, իս երևակայությունից դուրս էր:

Առավոտյան ժամը ինն է շկար, երբ պարզ երկնքում հրևացին զինվորական ուղղաթիռներ և վայրէջք կատարելով, շըրջապատեցին գյուղը: Քիչ հետո եկավ ալլուշարայուն, և գյուղը լցվեց զինվորներով: Ոչ ոք իրավունք չուներ տնից դուրս զալ կամ բարձրածայն խոսել: Իսկ թե ինչ անակնկալ էին դավում, դեռ պարզ չեր: Դարձվեց միայն այն ժամանակ, երբ գյուղ մտան նաև երկու «ԼԱԶ» մակնիշի և երեք մարդատար մեքենաներ, մոտ ութսուն մարդ միլիցիայի տարագով: Վերջիններս մոյ «օրինապահպան ու ինտերնացիոնալիստ» հարևաններից էին: Նրանք մի պահ իրար գլխի հավաքվելով, նորից մորեխների նը-

ման ցրվեցին գյուղով մեկ, իբրև եկել են ստուգելու անձնագրային ռեժիմը: Ինձ վրա հատուկ ուշադրություն դարձրին, որպէս Հայաստանի անձնագիր ունեցողի: Ստուգողները իրենց լեզվով ինչ-որ բաներ մրբրթացին և ինձ արցանելով, տարան նատեցրին ավտոբուս, համոզելով, որ տանում են Ասկերանի շրջանի ներքին գործերի բաժին, պարզելու, թե ինչ իրավունքով են ինձ գրանցել իրենց պատկանող գյուղում:

Երբ ինձ գոռով խցկեցին ավտոբուս, տեսա մեր աշխատելին՝ Բարեկենին, ավտոբուսում արցանված: Նա ինձ հասկացրեց՝ մեր գլուխը սրանք աղալու են, մի բան մտածիր:

Ավտոբուսը դեռ շարժվելու պահին փորձեցին ինն էլ զսպաշապիկ հազցենել, բայց ես դիմադրում էի, պաշտպանվում հարվածներից, իսկ նրանք տապալել էին ուզում, որ զինվորները չնկատեն, որ ավտոբուսում ուրիշ մարդ կա: Հենց զինվորական կետի մոտով անցնելիս, լարեցի վերջին ուժերս և իրարանցումի մեջ շարդեցի մեքենայի ապակիներից մեկը՝ օգնություն գոռալով:

Զինվորները փակեցին ավտոբուսի ճանապարհը...

Մենք շնորհակալ եղանք զինվորներից՝ մեզ փրկելու համար, բայց նաև վրդով-

մոնք հայտնեցինք, որ թույլ են տալիս այդ բալանչիներին ուրիշի տանը տնօրինություն անեն: Սակայն պարզից էլ պարզ է, որ զինվորը միայն հրաման կատարող է, որ անարդարությունը գալիս է վերևից, գառան մորթի հազար հրաման տվողից:

Երբ գյուղը նորից հանդարտվեց, մարդիկ սկսեցին իրար պատմել, թե խորհրդային միլիցիայի համազգեստով թալանչենք ինչեր են արել: Թալանի ցուցակը ու գյուղի ավերվածությունների մասին տեղեկանք չկազմելու ու ճշմարտության դեմ շմեղանշելու համար միայն ասեմ, որ մեր տնից տարել են մեր հոգեպահուստը՝ ուր հազար ուրիշի, շիաշված իմ գրպանի հարյուր ուրիշին, հորս ու մորս պատկանող նոր հագուստեղենը և այլ իրեր: Ինարկե, այս բոլորը մեզ շատ էր վյուղվեցրել բայց չի ընկենի: Բայց երբեմն ինքս ինձ հետ սկըսում եմ զրուցել, թե Հայաստանում ապրող, Արցախում իրենց պապենական օջախները լրած մարդիկ ինչ են մտածում այս օրիսական ժամին: Առավել ևս նորանք, ովքիր Երևան քաղաքին իրենց ներկայությամբ ոչինչ չեն ավելացնում, բացի բաղաքի հոգսը ծանրացնելուց: Խոզ են ձևանուն այնտեղ՝ Արցախում լրված ու մարվող օջախների աղաղակող, աղերսող կանչի հանդեպ:

Միրելի հայաստանաբնակ արցախցիներ, թող տարօրինակ շրվա, եթե ասեմ, որ առաջին հերթին դուք պետք է լինեք այնտեղ, որտեղ իմ ծնողներն են ու ես:

Ռաֆիկ ԽԾ. Ա. ՏՐԵՎԱՆ

